

Հաստատված է՝
«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի
2016 թ. հունվարի 26-ի թիվ 1 նիստում
«ՀՈՒՄԿ» Գիտական խորհրդի նախագահ՝

_____ *Հ.Մ. Սահակյան*

Կ Ա Ր Գ

«ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

«ՀՈՒՄԿ» կրթական հիմնադրամը ուսումնական գործընթացում իր կարևորագույն խնդիրներից է համարում գրագողության դեմ պայքարը: Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. ՄՈՒՀ-ում ստեղծել «Անհատական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր» տվյալների էլեկտրոնային շտեմարան:
2. Օգտագործել և փորձարկել գրագողության բացահայտման տարբեր ծրագրեր /plagiatanet.ru, plagiarisma.ru և այլ հայտնի ծրագրեր/, որոնց նպատակը կլինի համեմատել ներկայացված աշխատանքներն արդեն պաշտպանված և տվյալների բազայում մուտքագրված ու պաշտպանություն անցած աշխատանքների, ինչպես նաև համացանցում առկա նյութերի հետ:
3. Յուրաքանչյուր առանձին դեպքում հետևողականորեն քննարկել այն հարցը, թե մասնակի համընկման դեպքում համարել աշխատանքը գրագողություն, թե ոչ:
4. Բարձրացնել դասախոսների պատասխանատվությունը անհատական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, ինչպես նաև դրանց ղեկավարման նկատմամբ: Աշխատանքներն իրենց բնույթով պետք է դառնան փաստարկային աշխատանքներ, նվիրված լինեն կոնկրետ խնդիրների և

նպատակաուղղված լինեն ուսանողի հետազոտական ունակությունների զարգացմանը:

5. Մշակել միջոցներ լավագույն աշխատանքների խրախուսման համար:
6. Պատշաճ կերպով հետևել օգտագործված աղբյուրները հղելու բոլոր պահանջներին:
7. Գրագոռոթյան նկատմամբ ցուցադրել գործնական անհանդուրժողականություն՝ կանոնակարգում պատիժների (նախազգուշացում, գնահատականի իջեցում, հեռացում և այլն) մշակման և կիրառման տեսքով:
8. «ՀՈՒՄԿ» ԿՀ ընդունված ուսանողներին տեղեկացնել գրագոռոթյան և դրա հետևանքների մասին՝ հատուկ կողմնորոշիչ դասընթացների, տպագիր ուղեցույցների միջոցով:
9. Նախապատրաստական աշխատանքներ տանել գիտական շարադրանքի մեթոդներին նվիրված դասընթացներ ներդնելու ուղղությամբ: Այս նպատակն իրականացնելու համար պատրաստել համապատասխան մասնագետներ, որոնք իրենց փորձը կկարողանան փոխանցել ուսանողներին: